## ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ 10

Վայր՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնքի Կաթնաղբյուր բնակավայր, 2-րդ փողոց, շենք 5
Շինություն՝ Մշակույթի տուն
Ակտի կազմման օրն ու ամսաթիվը՝ 13 հոկտեմբեր 2025թ.

Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով Կաթնաղբյուրի մշակույթի տան շենքի տեխնիկական վիճակը, արձանագրել է մի շարք թերություններ և անհրաժեշտություն՝ իրականացնել համապատասխան վերականգնման և վերանորոգման աշխատանքներ:

| № | **Թերության նկարագրություն** | **Անհրաժեշտ աշխատանքների նկարագրություն** | **Նշումներ** |
|---|---|---|---|
| 1 | Դահլիճի փայտե հատակի և բեմահարթակի հատվածներում առկա են կոտրված և մաշված տախտակներ | Վերականգնել և փոխարինել վնասված փայտե հատակները, իրականացնել լաքապատում | |
| 2 | Առաստաղի որոշ հատվածներ վնասված են և ունեն ճաքեր | Նորոգել և ներկել վնասված հատվածները | |
| 3 | Դահլիճում և միջանցքում լուսավորությունը անբավարար է | Տեղադրել նոր լուսավորության համակարգ և ապահովել անվտանգությունը | |
| 4 | Սանհանգույցը անմխիթար վիճակում է | Կատարել սանհանգույցի ամբողջական վերանորոգում՝ ներառյալ սալիկապատում և կոյուղագծերի նորացում | |
| 5 | Միջանցքի պատերն ու հատակը մաշված են | Իրականացնել միջանցքի պատերի նորոգում և ներկում | |
| 6 | Հանդերձարանը վերանորոգման կարիք ունի | Նորոգել պատերը, հատակը, ապահովել կահավորանք և լուսավորություն | |
| 7 | Դռները մաշված և անսարք են | Փոխարինել նոր դռներով՝ պահպանելով անվտանգության և հերմետիկության պահանջները | |

**Պատասխանատու անձինք՝**

Անժելա Դիլանյան

Մնացական Ներսիսյան

Գևորգ Հայրապետյան